

ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Բուխարեստ

Անհուն ուրախությամբ ստացանք բարի լուրը Նորին Սրբություն Ռումինիայի Պատրիարքի՝ Բուխարեստում հայոց թեմի եկեղեցական թանգարան կատարած այցելության մասին: Հայ Եկեղեցու համար շատ մեծ պատիվ է Ռումինիայի Թեոկտիստ Սրբազան Պատրիարքի այս բարձր ուշադրությունը:

Այս երջանիկ առիթով խնդրում ենք, որ Մեր սիրեցյալ եղբայր Սրբազան Պատրիարքը ընդունի Մեր խորին շնորհակալությունն ու եղբայրական հարգալից սիրո հավաստիքը, ինչպես նաև նրա հոգևոր, լուսավոր անձնավորության հանդեպ Մեր բարձր գնահատանքը, որ Մենք պահում ենք Մեր սրտում տակավին այն օրերից, երբ մեր միջև հոգևոր եղբայրությունը շաղախվեց Ռումեն երկրի օրհնյալ երկնքի ներքո:

Խնդրում ենք, որ Նորին Սրբությունը ընդունի Մեր ջերմ մաղթանքները լիակատար քաջառողջության՝ շատ տարիներ խաղաղությամբ և պըտղառատ իրագործումներով ռումեն հավատավոր ժողովրդի փառավոր Եկեղեցուն ծառայելու համար:

Էջմիածնի Ս. Աթոռից բարի մաղթանքներ և օրհնություններ Ձեզ, սիրելի Սրբազան, թեմական խորհրդիդ և Ռումինիայի համայն հայ հավատացյալ ժողովրդին:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
29 մայիս 1987 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Հոծ բազմության ներկայությամբ և խանդավառ մթնոլորտում կատարեցինք հանդիսավոր բացումը Հայ մշակույթի տան և թանգարանի:

Հայերեն և ռումիներեն լեզուներով կարդացվեց Ձերդ Սրբության հեռագիրը:

Հազար շնորհակալություն Ձեր գուրգուրանքի, գնահատանքի և օրհնության համար:

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Բուխարեստ,
30 մայիս 1987 թ.

ՊՈՒՔՐԵՇԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Դարավոր Ռումանահայ՝ գաղութը վերջին տարիներին ապրում է իր նոր շրջանի վերածնունդը: Եթե 1966 թվականին Պուքրեշի Հայոց փողոցի վրա գտնվող Հայոց Առաջնորդարանի սրահին մեջ հաստատվում էր մեր գաղութի առաջին եկեղեցական և պատմական թանգարանը, Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի ջանքերով, ապա այս տարի, 1987 թվականին վերակազմված և հարստացած թանգարա-

Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը արտասանում է բացման խոսքը